# ԷՐԵԲՈՒՆԻ—ԵՐԵՎԱՆԸ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՄԱՅՐՈՒՂԻՆԵՐԻ ՎՐԱ*

Ս. Տ. ԵՐԵՄՅԱՆ
ՀՍՍՀ ԳԱ ակադեմիկոս

*Խոսելով Էրեբունի—Երևանի մասին, իբրև Արարատյան դաշտի հնագույն քաղաքային կենտրոնի, չպետք է մոռանալ այն դերը, որ ունեցել է մեր մայրաքաղաքը իր գոյության սկզբնական շրջանում և հետո՝ միջազգային ապրանքափոխանակության մեջ։ Այժմ պարզվում է, որ Ստրաբոնի ներքոհիշյալ վկայությունը միջազգային առևտրական փոխանակության մասին Բոսպորի թագավորության, Բաբելոնի ու Հնդկաստանի միջև, որի միջնորդներն էին հայերն ու մեդացիները, առնչություն ունի նաև Էրեբունի—Երևանի սկզբնական պատմության հետ։*

*Ստրաբոնը (XI, 5, 8), խոսելով Ազովի և Կասպից ծովի միջև գտնվող տափաստաններում ապրող թափառաշրջիկ ժողովուրդների մասին, հատկապես հիշատակում է սիրակներին (Σίραχες) և առրաներին (Ἀορσοι)։ Մեծ աշխարհագրագետը ասում է, որ սրանք «Տիրեցին Կասպերի ծովափի գրեթե մեծագույն մասին, որով ձեռք բերին հնդկական և բաբելական ապրանքների առևտուրը, որ կատարվում էր ուղտերով՝ Հայաստանի և Մարաստանի միջով. սրանով հարստանալով ոսկեհուռն զգեստներ էին կրում։ Առրսները բնակվում են Տանայիսի երկարությամբ, իսկ սիրակները՝ Աքարդեոս գետի, որ Կովկասից հոսելով Մայոտիս է թափվում»[1]։ Ստրաբոնի այս տեղեկությունը հասնում է Պատրոկլեսի հետախուզական էքսպեդիցիայի ժամանակաշրջանին (III դար մ. թ. ա.)։*

*Հույն-մակեդոնական նվաճողներն առհասարակ ոտք չէին գրել Անդրկովկասի արևելյան ծովափնյա մասերը, սակայն մեծ էր հետաքրքրությունը դեպի այդ երկրները, մանավանդ Սելևկյանների տիրապետության ժամանակաշրջանում՝ Առաջավոր Ասիայում մ. թ. ա. IV—III դարերում։ Ենթադրվում էր, որ Արևելյան Անդրկովկասի և Կասպից ծովի վրայով հաղորդակցություն գոյություն ուներ Հնդկաստանի հետ։ Միջազգային առևտրի զարգացումը հրամայական էր դարձնում այն հարցը, թե արդյոք Կասպից ծովը միանում է այլ ծովերի հետ, թե՞ այն փակ ավազան է։ Այս հարցի վերաբերյալ գոյություն ունեին իրար հակասող տեղեկություններ ու լուրեր, ուստի անհրաժեշտ էր ստուգել ու պարզել։ Ալեքսանդր Մակեդոնացին, մ. թ. ա. 323 թվականին, Արգեոսի որդի Հերակլիդին հանձնարարում է պատրաստություն տեսնել Կաս-*

---

* *Զեկուցում կարդացված 1968 թ. հոկտ. 16-ին, ՀՍՍՀ ԳՍ ընդհանուր ժողովում՝ նվիրված Երևանի հիմնադրման 2750-ամյակին։*

1 *Ստրաբոն, Քաղից և թարգմանեց Հ. Աճառյան, Երևան, 1940, էջ 35.* — Καὶ σχεδὸν τι τῆς Κασπίας παραλίας τῆς πλείστης ἦργον, ὥστε καὶ ἐνεπορεύοντο καμήλοις τὸν Ἰνδικὸν φόρτον καὶ τὸν Βαβυλώνιον παρά τε Ἀρμενίων καὶ Μήδων διαδεχόμενοι. ἐχρυσοφόρουν δὲ διὰ τὴν εὐπορίαν. οἱ μὲν οὖν Ἄορσοι τὸν Τάναϊν παροικοῦσιν, οἱ Σίρακες δὲ τὸν Ἀχαρδέον, ὃς ἐκ τοῦ Καυκάσου ῥεῶν ἐκδίδωσιν εἰς τὴν Μαιῶτιν (Strabo, XI, 5, 8).

պից ծովը ուսումնասիրելու համար արշավախումբ ուղարկելու, սակայն Ալեքսանդրի անակնկալ մահը ձախողում է այդ ծրագիրը (Arrian, Anab., VII, 16, 1)։

Այս հարցը չի մոռացվում և 40 տարի հետո նորից դրվում է օրակարգում։ Սելևկոս Ա Նիկատորի (312—281) և նրա որդի ու գահակից Անտիոքոս Ա-ի (280—261) հանձնարարությամբ կազմակերպվում է արշավախումբ սելևկյան զորավար Պատրոկլեսի գլխավորությամբ, որը մ. թ. ա. 283—282 թթ. շրջագայում է Կասպից ծովի ափերը, և առաջին անգամ հույները շփվում են աղվանների ու նրանց հարևանների հետ։ Պատրոկլեսի ուսումնասիրության նյութերը ընկնում են Էրատոսթենեսի (276—194) ձեռքը, որի միջոցով դրանց, այնուհետև, ծանոթանում է Ստրաբոնը (XI, 7, 3)։ Պատրոկլեսի ուսումնասիրության արդյունքից պարզվում է, որ Կասպից ծովը չի կապվում Մեոտիսի (Ազովյան) ծովի հետ, սակայն գերիշխող է դառնում այն թյուր կարծիքը, որ իբր թե այն հաղորդակցվում է Հյուսիսային օվկիանոսի հետ (Strabo, XI, 7, 1; XI, 6, 1)։ Պատրոկլեսի տեղեկություններին է հանգում, ըստ երևույթին, նաև այն կարծիքը, որ իբր թե հնարավոր է նավագնացություն Օքսոսի (Ուղբոյ) և Կուրի գետաբերանների միջև (Plin., NH, VI, 36—38)։ Ուշագրավ է, որ Պատրոկլեսի նյութերը մեծ չափով օգտագործվում են Էրատոսթենեսի, Արիստոբուլոսի, Ագրիպպայի, Մարինոս Տյուրացու և Պտղոմեոսի կողմից կազմված քարտեզներում։

Հերոդոտոսը (I, 203) մոտ Կասպից ծովի մասին ճիշտ տեսակետ գոյություն ուներ։ Նա այն համարում էր փակ ավազան, իսկ Պատրոկլեսը, հակադրվելով նրան, ենթադրում էր, որ Կասպից ծովը Հյուսիսային օվկիանոսի հարավային ծովախորշն է։ Այս տեսակետը հետագայում ահագին թյուրիմացությունների տեղիք է տալիս։ Սակայն Մարինոս Տյուրացին և ապա Պտղոմեոսը (V, 9, 7) այս հարցում հետևեցին Հերոդոտոսի տեսակետին, ուստի Պտղոմեոսի քարտեզի վրա Կասպից ծովը ներկայացված է իբրև փակ ավազան[2]։ Այդպիսով, հույն-մակեդոնական, հատկապես սելևկյան նվաճողների ենթադրությունը, թե այս հյուսիսային ճանապարհով կարելի կլինի հաղորդակցություն ունենալ Հնդկաստանի հետ, ի դերև եղավ։ Ջնայած դրան, այդ ենթադրյալ ճանապարհի մասին (որը իբր Կողքիսի Փասիս (Ռիոն) գետով, ապա Կուր գետով՝ Կասպից ծով և Օքսոս գետով հասնում էր Հնդկաստան) հաղորդում է Ստրաբոնը (XI, 7, 3) և շփոթության մեջ է գցում այժմյան հետազոտողներին[3]։

Անդրադառնալով Պատրոկլեսի հետախուզական արշավանքին Կասպից ծովի ավազանում, պետք է նշել, որ հույն հետազոտողները պիտի պատահեին այս տեղերում սիրակների և առրսների քարավաններին, որոնք, անցնելով Մարաստանի, ապա Հայաստանի վրայով, ուղևորվում էին դեպի հյուսիս՝ Կասպից ծովի կովկասյան ափերով մինչև Տանայիս (այժմ Դոն) գետը և Մեոտիս ծովը (այժմ Ազովյան ծով), որտեղ գտնվում էր Բոսպորի թագավորությունը։ Վերջինս հիմնական գնողն էր Հնդկաստանից և Բաբելոնից արտա-

---

2 Տե՛ս С. А. Ковалевский, «Карта Птолемея» в свете исторической географии Прикаспия, журнал «Известия Всесоюзного Географического общества», 1953, № 1, стр. 31—48.

3 Վ. Վ. Բարտոլդը և Հ. Հ. Մանանդյանը գիտականորեն հիմնավորեցին նման ճանապարհի ենթադրության անհնարությունը։

հանվող ապրանքների։ Դրանք էին՝ Հնդկաստանում արտադրվող պերճանքի առարկաները և թանկարժեք ակնեղենն ու քարերը և Արաբիայից ու Բաբելոնյան Միջագետքից արտահանվող համեմունքն ու այլ հազվագյուտ ապրանքներ։

Այս ապրանքների հիմնական գնողը՝ Բոսպորի թագավորությունը իր ծաղկման ժամանակաշրջանն էր ապրում մ. թ. ա. V դարի վերջից մինչև III դարի սկիզբը[4], և Ստրաբոնից բերված վկայությունը վերաբերում է այս ժամանակաշրջանին։ Նույն Ստրաբոնը (VII, 4, 6) հիշատակում է աղ դրած ձկան (ταριχος) արտահանումը Մեոտիս (Ազովյան) ծովափից Հունաստան։ Սակայն այն փաստը, որ ταριχος բառը մտել է հայոց լեզվի մեջ «տառեխ» ձևով՝ իբրև Վանա լճում որսացող ձկան անուն[5], ցույց է տալիս, որ Հայաստանի համար այնքան սովորական երևույթ դարձած հունական գաղութներից ներմուծվող աղի ձուկը (որ աղ դրած վիճակում արտահանվում էր հեռավոր երկրներ) նույնպես հայտնի էր այդ անունով։ Անշուշտ, այդ ժամանակներից է, որ Վանա լճի հյուսիսում գտնվող գլխավոր ձկնորսարանը՝ Առեստ ավանը դառնում է «ձկնատեանք արքունի» (Փավստոս Բուզանդ Գ, Ը), այսինքն այդտեղ տառեխ ձկան որսը դառնում է պետության մենաշնորհ, ըստ երևույթին արդեն ուրարտական ժամանակաշրջանում[6]։

Բոսպորի թագավորության, ինչպես և Հյուսիսային Կովկասի անծայրածիր տափաստաններում ապրող սիրակների, առոսների և այլ ցեղերի առևտրականները միջազգային առևտրի մեջ էին ընդգրկված Սև ծովի ափին գտնվող Կողքիսի նավահանգիստների միջոցով և ցամաքով՝ մերձկասպյան ծովափնյա ճանապարհներով Հայաստանի և Մարաստանի հետ, որոնք միջանկյալ օղակ էին հանդիսանում նրանց և Բաբելոնի ու Հնդկաստանի միջև կատարվող ապրանքափոխանակության համար։

Որքան էլ մեզ հասած տեղեկությունները սուղ են, այնուամենայնիվ անուղղակի փաստերի հիման վրա, հնարավոր է կռահել, որ այդ միջազգային առևտրի մայրուղին անցնում էր Արաքսի հովտով և ճյուղավորվում էր Արարատյան դաշտում, հատկապես Էրեբունի—Երևանի շրջակայքում։

Ինչպես տեսանք, նույն Բոսպորյան թագավորությունը առևտրական կապեր էր պահպանում Հնդկաստանի և Բաբելոնի հետ նաև Սև ծովի ափերով՝ Կողքիսի (այժմ Արևմտյան Վրաստան) և Հայաստանի հյուսիս-արևմտյան երկրամասերով։ Կողքիսի գլխավոր նավահանգիստներ Դիոսկուրիայի (այժմ Սուխումի) ու Փազիսի (այժմ Փոթի) ծաղկումը պայմանավորված էր այդ առևտրական փոխանակությամբ՝ Բոսպորյան թագավորության ու Արևելքի միջև։ Բոսպորյան թագավորության առևտրականները Արևելքի հետ կապերը էին պահպանում այն տարանցիկ առևտրական ճանապարհով, որն անցնում էր Հայաստանով։ Այդ առևտրի մայրուղին ծովափնյա հունական էմպորիոններից անցնում էր Փազիս գետի հովտով դեպի արևելք ու հարավ-արևելք և Հոոդոպոլիս (վրաց. Վարդցիխե) ավանով բարձրանում դեպի Մոսխական

---

4 Տե՛ս В. Ф. Гайдукевич, Боспорское царство, М.—Л., 1949, գլուխ 5-երորդ, էջ 80—93։

5 Հ. Աճառյան, Հայերեն լեզվի արմատական բառարան, հատ. Զ, Երևան, 1926, «Տառեխ» բառի տակ։

6 Առեստ ավանի մասին տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույցի», Երևան, 1963, էջ 37։

(Մեսխեթի) լեռները, ապա անցնում Ջեկարի լեռնանցքով Գոդերձական երկրի Սամցխե գավառը (այժմյան Ախալցիխեի շրջանը) և այնտեղից Ջավախք ու Ախուրյանի վտակ Ռահ գետի ընթացքով անցնում Արագած լեռան հարավային փեշերով դեպի Մեծամորի մետաղագործական կենտրոնը, որից հետո՝ Էրեբունի—Երևանի շրջանը, ուր ճանապարհը խաչավորվում էր Աղստևի[7] և Սևանա լճի ու Հրազդանի կողմից եկող ճանապարհի հետ։ Այնուհետև, մայրուղին ընթանում էր Արաքս գետով մինչև այժմյան Ջուղայի գետանցը, ապա՝ Մարաց աշխարհ՝ Մեդիա և Միջագետք մինչև Պարսից ծոց։

Ահա այս միջազգային առևտրով էր պայմանավորված այն հանդամանքը, որ Էրեբունի—Երևանը իր գոյության սկզբնական շրջանում առաջատար դեր էր խաղում Արարատյան դաշտավայրում։ Երևանի շրջակայքում, այդ ժամանակ, լայնորեն տարածված էր հացահատիկի մշակումը, այգեգործությունը և գինեգործությունը[8]։ Հավանաբար այգտեղի ընտիր գինիները արտահանվում էին նաև արտաքին շուկա, ինչպես ապացուցում են Թեյշեբաինիի պեղումները և ավելի ուշ շրջանի գրավոր վկայությունները։ Ուրարտական թագավորները հատուկ ուշադրություն էին գարձնում արհեստական ոռոգման հարցերին և այդ ժամանակներում է անցկացվում ոչ միայն Դալմայի ջրանցքը, այլև Գետառուն, որը բերվում է Կոտայքից՝ Էրեբունիի շրջակայքը ոռոգելու համար։

Սակայն անհրաժեշտ է նշել, որ միայն Էրեբունի—Երևանով չսահմանափակվեց ուրարտական տիրակալների շինարարությունը Արարատյան դաշտում։ Քաղաք-ամրոցի հիմնադրությունից վեց տարի չանցած, Արարատյան դաշտի կենտրոնում նույն Արդիշտի Ա-ն (786—760) անցկացրեց նոր ջրանցքների ավելի ընդարձակ ու բարդ ցանց, միևնույն ժամանակ հիմք դրվեց Արգիշտիխինիլի քաղաքին, որը հայերը կոչում էին Արմավիր կամ Արամայր։

Արգիշտիխինիլի—Արմավիրը ավելի շատ տվյալներ ուներ խոշոր կենտրոն դառնալու և նրա նշանակությունը մեծանում է հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում, երբ Արարատյան դաշտավայրը դառնում է Հայաստանի տնտեսական, քաղաքական ու մշակութային կենտրոն։ Սակայն հնագիտական պեղումները ցույց են տալիս, որ Էրեբունի—Երևանը, կարճ ժամանակով իր տեղը զիջելով Արգիշտիխինիլիին, Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում նորից առաջատար դեր է խաղում։ Երևանը դառնում է Աքեմենյան պետության XVIII սատրապության կենտրոններից մեկը և Այրարատ երկրամասի կենտրոնը[9]։ Պեղումների ժամանակ գտնված մ. թ. ա. 478 թվականից առաջ հատված միլետյան արծաթե դրամները[10] պերճախոս վկաներն են Էրեբունի—Երևանի ներգրավմանը միջազգային փոխանակության մեջ։ Ինչպես հնագետները ցույց են տալիս, այս ժամանակաշրջանի հետ է

---

7 Ուրարտական արձանագրություններում հիշատակվող «Ալիշտու» երկրի անունից պիտի առաջացած լինի «Աղստև» ձևը։

8 Н. В. Арутюнян, Земледелие и скотоводство Урарту, Ереван, 1964, стр. 117, 138.

9 Գ. Ա. Տիրացյան, Արին-բերդի սյունազարդ դահլիճը և սատրապային կենտրոնների հարցը Հայկական լեռնաշխարհում, «Տեղեկագիր», 1960, № 7—8, էջ 99—113։

10 Б. Б. Пиотровский, Ванское царство, М., 1959, 31։ Հայտնի է, որ Բոսպորի թագավորության մայրաքաղաք Պանտիկապեան հիմնադրել են Միլետից դուրս եկած գաղթականները (Strabo, VII, 4, 4)։

կապվում Արին-բերդում պեղված սյունազարդ դահլիճը—ապադանա—ապարանքը[11]։

Երևանի առաջատար դերը Արարատյան դաշտում վերանում է հելլենիստական ժամանակաշրջանում։ Սկզբում այս դաշտավայրը դառնում է Երվանդունիների թագավորության կենտրոն, իսկ III դարի վերջերից՝ Արտաշիսյանների Մեծ Հայք թագավորության կենտրոն։ Մեծ Հայքի Այրարատ նահանգը, որի կենտրոնն էր Այրարատյան դաշտավայրը, այնուհետև, դառնում է ամբողջ Հայաստանի առանձին մասերը զոդող գործոն։ 202—201 թվականներին (մ. թ. ա.), երբ Անտիոքոս Գ Մեծը (225—187) հաստատում է Հայաստանում և Վրաց աշխարհում Սելևկյանների կարճատև դերիշխանություն, Արմավիրը դառնում է հույն-մակեդոնական զորամասերի կենտրոն, և վերջին Երվանդ թագավորը (շուրջ 220—190 թթ.) հարկադրված է լինում նոր կենտրոն փոխադրվել։ Նա Ախուրյան և Երասխ գետերի եռանկյունիում հիմնում է Երվանդաշատ քաղաքը և նրանից հյուսիս՝ Ախուրյանի ձախ ափին՝ Երվանդակերտ դաստակերտը։ Այս բնակավայրը կամուրջով միանում էր աջ ափի հետ, որտեղ կառուցվում է Բաղարան ավանը։ Այստեղ են փոխադրվում Արմավիրի գլխավոր տաճարի կուռքերը՝ Տիր-Ապոլոնի և Անահիտ-Արտեմիդեի «պատկերները», ինչպես և Երվանդունի հարստության թագավորների արձանները։ Այս տաճարի գլխավոր քուրմն էր արքաեղբայր Երուազը։ Նույն այս ժամանակ Մեծամորի նորահայտ մետաղագործական կենտրոնից ոչ հեռու՝ հետագա Վաղարշապատ—էջմիածնից հյուսիս՝ Շրեշ բլուրի տակ, հիմնադրվում է Վարդեսավանը կամ Արտիմեդը, արդեն Արագածի հարավային փեշերով անցնող մայրուղու վրա, որը տանում էր նորից Երևան։ Վերջինս Արին-բերդի բլուրի վրայից անընդհատ շարժվում էր դեպի Հրազդանի կիրճը, որը ավելի ապահով էր բնակավայրի համար։ Շիրակի կենտրոնում՝ Ախուրյանի և Ռահ գետի միացման վայրերում՝ «Մեծ դաշտում» հիմնվում են Երվանդավանը (հետագայում Շիրակաշատ) և Երազգավորսը կամ Շիրակավանը։ Սրանց կողքին հնագույն ժամանակներից մնում էր Կումայրի (այժմ Լենինական) բերդը։ Երվանդունիների թագավորության ժամանակաշրջանից պիտի գոյություն ունենային Անին՝ իբրև ամրոց Ախուրյանի ափին և Գառնին՝ (նույնպես ամրոց) Երևանից ոչ հեռու։ Արտաշիսյանների ժամանակ Գառնիից հարավ գտնվող Երասխի (Արաքսի) հովտում Մեծամորի և Գինեգետի[12] վտակների այդ գետում թափվելու տեղում, հիմնվում է Արտաշատ քաղաքը, որը ժամանակի ընթացքում նսեմացնում է Արարատյան դաշտի բոլոր մյուս կենտրոնները, որովհետև այն գտնվում էր հարավից եկող մայրուղու վրա։ Այնուհետև, Արարատյան դաշտավայրում, անտիկ հեղինակների Արաքսենեում (Ἀραξηνή), բոլոր կողմերից եկող ճանապարհների հանգույցը դառնում է Արտաշատը։ Չնայած նրան, որ Արմավիրի, Արտաշատի, ապա Վաղարշապատի և ավելի ուշ՝ Դվինի բարձրացումով Երևանը դառնում է երկրորդական քաղաք, այնուամենայնիվ այն իր նշանակությունը չի կորցնում միջազգային առևտրի մեջ։ Երևանը շարունակում էր մնալ միջազգային առևտրի մայրուղիների հանգուցակետում, հատկապես այն

11 Գ. Տիրացյան, նշվ. աշխ., passim։

12 Այժմ Կարա-սու, որը սկիզբ է առնում Մասիսի հյուսիսային փեշերից և աջ կողմից թափվում Երասխ (Արաքս) գետը։

ճանապարհի վրա, որ տանում էր դեպի հյուսիս՝ Վիրք և Աղվանք, իսկ այնտեղից էլ՝ դեպի Հյուսիսային Կովկաս և Բոսպորի թագավորություն։

Դեռևս ուրարտացիների ժամանակ հայտնի էր այն ճանապարհը, որը Էրեբունի—Երևանից, Հրազդանի վրայով, տանում էր Սևանա լիճը, իսկ այնտեղից դեպի Աղստև գետի հովիտը։ Այստեղ, այժմյան Ղազախ քաղաքի մոտերքում, գտնվում էր մի այլ հանգուցակետ, որտեղից ճանապարհը ճյուղավորվում էր. մեկը տանում էր դեպի արևմուտք՝ Վրաց աշխարհ, այնտեղից էլ նույն Կողքիսի նավահանդիստները, իսկ մյուսը՝ դեպի արևելք՝ Աղվանք և մերձկասպյան Մաղքթաց թագավորություն։

Այժմյան Ղազախ քաղաքի մոտերքում գտնվող Սարը-թեփե կոչված բլուրում տարվող հնագիտական աշխատանքները երևան են բերել Աքեմենյան տիրապետության ժամանակաշրջանի հուշարձաններ[13]։ Մեզ թվում է, որ այնտեղ պիտի վինտրել խաղխաղ քաղաքը, որը մի ժամանակ հայ Արշակունիների և թերևս Արտաշիսյանների ձմեռանոցն էր։ Ղազախի շրջանը իր մեղմ և բարեբեր կլիմայով հարուստ է ձմեռային արոտավայրերով և այս վայրը ձմեռանոցի դեր պիտի կատարած լինի նաև ուրարտացիների ու Աքեմենյանների ժամանակաշրջանում։ Էրեբունի—Երևանում նստող կառավարիչը, իբրև փոխարքա ուրարտական թագավորի միացյալ էտիունի երկրի, որ իր տերիտորիայով համընկնում է հետագա Այրարատ նահանգին, իր ձմեռային նստավայրը պիտի ուներ այժմյան Ղազախ քաղաքի շրջակայքում, որով նա հնարավորություն էր ստանում հսկելու Ուրարտուի թագավորության այս ծայրամասը։ Նույն վիճակը պիտի մնար նաև Աքեմենյանների տիրապետության ժամանակաշրջանում։ Դարեհ Ա Վշտասպյանի (522—486) կողմից ստեղծված XVIII սատրապիան պիտի ընդգրկեր նաև այս վայրերը, իսկ Երևանում նստող սատրապը կամ նրա տեղակալը պետք է իր ձմեռանոցն ուներ այժմյան Ղազախի շրջակայքում։

Էրեբունի—Երևանի տեղադրության առավելությունները պիտի ավելի դրսևորվեին հելլենիստական ժամանակաշրջանում, երբ Անդրկովկասի հյուսիսում առաջ եկան Վրաց աշխարհի և Աղվանից երկրի թագավորությունները, ապա Սելևկյանների կարճատև գերիշխանության ժամանակ։ Սելևկյան Անտիոքոս Գ Մեծը մ. թ. ա. 201 թվականի մոտերքը, հաստատելով իր տիրապետությունը Մեծ Հայքում, հարկավ չէր կարող ուշադրություն չդարձնել Վրաց աշխարհի ռազմա-ստրատեգիական նշանակության վրա, որի հյուսիսում գտնվում էին Կովկասյան գլխավոր լեռնաշղթայի անցքերը։ Սելևկյան պետության առաջ ծառանում էր կարևոր հարց՝ հսկողություն սահմանել այդ անցքերի վրա, որտեղից կարող էին ներխուժել Հյուսիսային Կովկասի վաչկատուն ցեղերը։ Վրացական պետության հիմնադիր Փառնավազից (270—219 թթ.) և նրա հաջորդ Սաուրմագից հետո թագավորած Միրվանին («Միրհաւան») է վերագրվում Դարիալի անցքի՝ «Դարուբալի»—Ալանաց դռների ամրությունների կառուցումը և պահակաղորքի տեղադրումը այնտեղ[14]։ Դարիալի կիրճի

---

13 И. Нариманов, Находки баз колонн V—IV вв. до н. э. в Азербайджане, «Советская археология», 1960, № 4.

14 ლეონტი მროველი, ცხოვრება ქართველთა მეფეთა, „ქართლის ცხოვრება", ტომი I (Լեոնտի Մռովելի՝ Վարք արքայից վրաց, «Պատմութիւն վրաց» (Քարթլիս ցխովրեբա), հատոր Ա, Թբիլիսի, 1955, էջ 28։

ամրապնդման հարցի հետ սերտ կապված է այժմյան ռազմա-վիրական ճանապարհի գոյության խնդիրը։ Այդ ճանապարհը, անշուշտ, այն ժամանակ գոյություն ուներ և սկսվում էր Վրաց աշխարհի մայրաքաղաք Արմազի-Մցխեթան հյուսիսից պաշտպանող Ծիծամուրի (Ստրաբոնի մոտ՝ Սեսամորա) բերդի ամրություններից և Արագվի գետի ուղղությամբ անցնում էր դեպի հյուսիս մինչև Դարիալի կիրճը, որտեղից Հյուսիսային Կովկասի նստակյաց և վաչկատուն ցեղերը որոշ առևտրական փոխհարաբերությունների մեջ էին Վրաց աշխարհի և Հայաստանից եկող առևտրականների հետ։

Վրացական թագավորության բարձրացումից հետո բանուկ ճանապարհ է դառնում այն մայրուղին, որը Կողքիսի նավահանդիստներից Փասիսի (Ռիոնի) հովտով և նրա վտակը հանդիսացող Ջիրուլա գետով տանում էր դեպի Լիխի լեռնապարը և այժմյան Սուրամի մոտ գտնվող լեռնանցքով մտնում Կուրի հովիտը՝ Քարթլիի սիրտը, որտեղ առաջ էին եկել մի շարք առևտրական քաղաքներ՝ Ուրբնիսի, Ուփլիս-ցիխե (Կասպիա) և մայրաքաղաք Արմազի-Մցխեթան։ Այս ճանապարհը, այնուհետև, միանում էր Ադստևի ձորով Հայաստանից եկող ճանապարհին։ Հյուսիսային մայրուղին նսեմացնում է հարավային մայրուղին, որը, ինչպես տեսանք, Ջեկարի լեռնանցքով տանում էր Գոդերձական երկրամասը և Հայաստան։ Այնուամենայնիվ, հարավային մայրուղին միաժամանակ մեծ դեր խաղաց Ախուրյանի հովտում գտնվող առևտրական կենտրոնների բարգավաճման համար, երբ Շիրակ և Արշարունիք գավառները դառնում են Երվանդունիների տնտեսական և կուլտուր-քաղաքական կենտրոն։ Բայց ավելի մեծ էր նոր հանդես եկող Արտաշատ մայրաքաղաքի նշանակությունը։

Արտաշատով էր անցնում դեպի հյուսիս և հյուսիս-արևմուտք միջազգային քարավանային առևտրի այն մայրուղին, որը սկսվում էր Պարսից ծոցի ափերից և Տիգրիսի վրա գտնվող հելլենիստական աշխարհի Սելևկիա-Տիգրոն խոշորագույն կենտրոնից դեպի Մարաստանի Էկբատանա և Ատրպատականի Գանձակ քաղաքները։ Այստեղից ճանապարհը շարունակվում էր, անցնելով Հայաստանի Նախճավան, Արտաշատ, Արմավիր, Երվանդաշատ քաղաքները և այնտեղից Զարիշատ և Գոդերձական երկրի Ջեկարի լեռնանցքով իջնում էր Կողքիս՝ Փասիսի (Ռիոնի) հովիտը և ծովափնյա առևտրական կենտրոններ Փասիս (այժմ Փոթի), Դիոսկուրիա (այժմ Սուխումի), Պիտիունտ (այժմ Պիցունդա) և այլ քաղաքներ, որոնք կապված էին առևտրական կապերով Բոսպորյան թագավորության վաճառաշահ քաղաքների հետ Ղրիմում և Մերձաղովյան երկրամասում։ Պոնտական թագավորության կենտրոններ՝ Ամիսոսի և Սինոպի բարձրացմանը զուգընթաց իջնում է Կողքիսի նավահանգիստների և այնտեղից Հայաստան գնացող ճանապարհների նշանակությունը, սակայն այդ հանգամանքը չի նսեմացնում Արարատյան դաշտի և նրա կենտրոնների առաջատար նշանակությունը։ Սկսում է զարգանալ այն մայրուղին, որը Սինոպից և Ամիսոսից Թերմոդոն-Գայլ գետի հովտով գնում էր դեպի Բարձր Հայք՝ Եփրատի հովիտը և այնտեղից Բասենով՝ Բագրևանդի դաշտը և Հայկական պարի լեռնանցքներով իջնում Արարատյան դաշտավայրը և Արտաշատ։ Սա արդեն ավելի ուշ ժամանակաշրջանն է՝ II և I դարերն են մ. թ. ա., իսկ մեր կողմից բերված Ստրաբոնի տեղեկությունը Հայաստանի և Մարաստանի վրայով տարվող առևտրի մասին առևտրի և սիրակների կողմից, վերաբերում է ոչ ուշ, քան մ. թ. ա. III դարին։ Նշված ժամանակաշրջանից շատ առաջ սիրակների և առևտրի մի մասը հաստատվում է Ախուրյանի հովտում և թողնում իր դո-

յության հետքերը այստեղի գավառների անվանումների և այլ աշխարհագրական անունների մեջ։ Այդ պարզվում է, հատկապես, ցեղանունների վերլուծությունից։ Σύρακοι ցեղանունը հունական ձևն է «սկյութական» ցեղերից մեկի, որոնց անունը հայերենում և հնդիրանական լեզուներում պիտի հնչեր «շիրակ»։ Նույնը պիտի ասել Ἄρσοι ցեղանվան մասին։ Վերջինս պիտի հնչեր «առշ», «արշ» կամ «արշար» (առնչվում է նրանց տոհմական անվան «Արշաւիր»-ի հետ), ճիշտ այնպես, ինչպես «գուդ» կամ «գոգ» և «գուգարք» (այստեղից Գուգարք)։ Ինչպես տեսնում ենք, այս երկու ցեղանունից պիտի ծագած լինի Շիրակ (հուն. Σύρακηνή) և Արշարունիք գավառների անունները։ Թե երբ է Ախուրյանի հովտում ուրարտական արձանագրություններից հայտնի (և իրանական ծագում ունեցող) գոյություն ունեցող էրեբախի երկրանունը փոխարինվել Շիրակ անունով, դժվար է ասել։ Հավանաբար, այդ պետք է տեղի ունեցած լինի Աքեմենյան Իրանի գերիշխանությունից առաջ և Ուրարտուի պետության վերջում, կամ նրանից հետո, այն է՝ Երվանդունիների հայկական թագավորության ժամանակաշրջանում, մինչև նրանց ենթարկումը Աքեմենյաններին մ. թ. ա. 520-ական թթ.[15]։ Սիրակները և առրսները իրենց լեզվով ցեղակից լինելով հնդիրանական և կիմերա-թրակիական ցեղախմբերին, մոտ էին հայ ժողովրդին, որը մ. թ. ա. VII—VI դարերին գերիշխող տարր էր դարձել նաև Հայկական պարից հյուսիս գտնվող Այրարատյան գաշտավայրում և Կարսի սարահարթում, բավական արագ պետք է ձուլեր իր մեջ, թողնելով նրանց հիշատակը Շիրակ և Արշարունիք գավառների անունների մեջ[16]։ Անհրաժեշտ է նշել, որ Հայկական լեռնաշխարհի հյուսիսային և հյուսիս-արևելյան երկրամասերը բաց էին հյուսիսից ներխուժող վաչկատուն ցեղերի առաջ, որոնք VIII—VII դարերում հայտնի էին «գիմիրա» // «գամիրա» (կիմերներ) և «իշկի» // «շակա» (սկյութներ) հավաքական անուններով։ Այս ներխուժող ցեղերը պատկանում էին հնդևրոպական լեզուներով խոսող հնդ-իրանական կամ կիմերա-թրակիական ցեղախմբերին, որոնք՝ ցեղակից լինելով հայ ժողովրդի բաղադրիչ տարրեր հանդիսացող հնդևրոպական ցեղերին, ընդգրկվում են հայ ժողովրդի կազմավորման շրջազակում[17]։ Պատմությանը առանձնապես հայտնի են սկյութական ցեղերի ներխուժումները, որոնք Արևելյան Անդրկովկասում նույնիսկ հիմնեցին առանձին թագավորություն, որը հիշատակվում է ասուրա-բաբելական արձանագրություններում[18] և Աստվածաշնչում[19] «Աշգուզ» կամ «Աշքենազ» անուններով։ Վերջինս Աստվածաշնչի հայերեն թարգմանության շնորհիվ՝ տարածվել է միջնադարյան հայերենում՝ «Ասքանազ» և «Ասքանազեան գունդ» դարձվածքներով, որոնք հայ մատենագրության մեջ երբեմն գործ են ածվում իբրև հայ ժողովուրդը նշանակող հորջորջումներ։ Անշուշտ, այս հանգամանքը ևս զուրկ չէ հետաքրքրությունից, քանի որ ցույց է տալիս այն տրադիցիան, ըստ որի Արևելյան Անդրկովկասում

15 Տե՛ս Ս. Տ. Երեմյան, Հայաստանը ըստ «Աշխարհացույց»-ի, Երևան, 1963, էջ 73—74։

16 Նրանց կողմից պիտի բերված լինի Ռահ գետի անունը։ Այսպես էր կոչվում Վոլգա գետը՝ հունական տառադարձությամբ՝ Ῥᾶ։

17 Ս. Տ. Երեմյան, Կիմերական և սկյութական ցեղերի արշավանքները և Ուրարտուի ու Ասորեստանի պայքարը քոչվորների դեմ, «Պատմա-բանասիրական հանդես», 1968, № 2 (41), էջ 89—115։

18 И. М. Дьяконов, История Мидии, М.—Л., 1956, стр. 242—254.

19 Երեմիա, ԾԱ, 27—28։

թափանցող հնդևրոպական ցեղերը կապեր են ունեցել հայ ժողովրդի հետ դեռևս հնագույն ժամանակաշրջաններում։

Այս սկյութական թագավորությունը՝ «Աշգուզը» ըստ երևույթին, ընդգրկվում է Աքեմենյանների աշխարհակալության մեջ, սահման ունենալով Կուր գետը։ Սակայն Կուր գետի ստորին հոսանքից հյուսիս գտնվող Մերձկասպյան երկրամասը շարունակվում է բնակված լինել սկյութա-իրանական ցեղերով, որոնցից առաջատարը, ըստ երևույթին, մասագետներն էին՝ հայ մատենագրության «Մազքութք» ցեղը։ Տակիտոսը (55—115) առաջինն է, որ հիշատակում է Մերձկասպյան սկյութների թագավորությունը (Tacitus, Annales, II, 68) հայ մատենագիրների «Մազքթաց թագաւորութիւնը»։ Վերադառնալով Պատրոկլեսի հետախուզական արշավանքին Մերձկասպյան երկրամասերում մ. թ. ա. III դարում, համոզվում ենք, որ պատահական չէ այն փաստը, որ սիրակների և առրսների ուղտերի քարավանները, որոնք գալիս էին դեպի հյուսիս՝ Հայաստանի և Մարաստանի կողմերից, կարող էին հանդիպած լինել հույն-մակեդոնական հետախույզներին, որոնք թափանցել էին անտիկ աշխարհի Օյկումենեի այս հեռավոր ծայրամասերը։

Ինչպես տեսնում ենք, մեզ հասած գրավոր նյութերը հնարավորություն են տալիս վերհանելու Երևանի և Արարատյան դաշտավայրի մասնակցությունը միջազգային ապրանքափոխանակության մեջ հեռավոր անցյալում, երբ մեր քաղաքը նոր էր հիմնվել իբրև ուրարտական վարչական կենտրոն, ապա իբրև Աքեմենյան աշխարհակալության XVIII սատրապության քաղաքական կենտրոն[20]։ Անշուշտ, միայն հյուսիսը չէր, որի հետ Երևանը կապեր էր պահպանում և որին առնչվում են պատահարար պահպանված տեղեկությունները Ստրաբոնի մոտ, ավելի ընդարձակ պետք է լիներ այդ կապերը Միջերկրածովյան ավազանի հետ, իբրև ապացույց նորից հիշենք Միլետի դրամները։

Այստեղ արժանի է հիշատակության Ապենինյան թերակղզում էրերունի-Երևանի հիմնադրումից հետո 30 տարի չանցած՝ մ. թ. ա. 753 թվականին «հավերժական քաղաք»՝ Հռոմի հիմնադրումը։ 1967 թ. սկզբին նշվեց Հռոմի գոյության 2720-ամյակը։ Այդ տեսակետից Երևանի դերը պատմության մեջ շատ ավելի համեստ էր, նա անընդմեջ գոյություն է ունեցել իբրև քաղաքատիպ վայր, հասնելով մինչև մեր ժամանակաշրջանը, երբ մեր քաղաքը աննախընթաց վերելք է ապրում և արագ քայլերով հասնում է միլիոնանոց ազգաբնակչություն ունեցող քաղաքների շարքին։ Երևանը ունի նաև մի այլ ժամանակակից՝ դա Միջին Ասիայի հնագույն քաղաքային կենտրոն Սամարղանդն է, որի 2500-ամյակը նշվում է այս տարի։ Սակայն Երևանը սրանց մեջ ավագագույնն է և նրա հիմնադրման մասին եղած փաստական տվյալները՝ ուրարտական արձանագրությունները, որոնք փորագրվել են Վանի միջնաբերդի ժայռի վրա և այստեղ Արին-բերդում՝ էրերունիի միջնաբերդում գտնված վիմագրերը, համաշխարհային պատմության համար եղակի իրողություններ են։ Սովորաբար նման հնագույն կենտրոնների հիմնադրման մասին մեզ չեն հասել գրավոր փաստացի տեղեկություններ, բացի ավանդական տվյալներից, ինչպիսին է, օրինակ, ավանդությունը Հռոմի հիմնադրման մասին, որը հեռադայում է միայն գրի առնվել։

20 Տե՛ս Կոստանդին Հովհաննիսյան, Էրեբունի, Երևան, 1968, passim։

# ЭРЕБУНИ—ЕРЕВАН НА ПУТЯХ МЕЖДУНАРОДНОЙ ТОРГОВЛИ

С. Т. ЕРЕМЯН
Академик АН Армянской ССР

**Резюме**

Новейшие изыскания показывают, что Ереван был древнейшим центром Араратской долины, которая являлась тем узлом, где скрещивались магистральные пути международной торговли древнего мира. В этом аспекте сведение Страбона (XI, 5, 8) о торговых связях Боспорского царства (Крым) с Вавилоном и Индией, посредниками которой являлись армяне и мидяне, относится также к Эребуни—Еревану ахеменидской и ранне-эллинистической эпохи (VI—VII вв.). Дошедшие до нас данные дают возможность говорить о двух основных магистралях, через которые осуществлялась международная караванная торговля. Одна магистраль — это меотидско-колхидская дорога, продолжением которой являлась дорога, идущая через Зекарский перевал, в долину верхнего течения Куры, затем через приток Аракса, Ахурян, в Араратскую долину. Другая магистраль шла через Дарьяльское ущелье и долину Арагви, в Восточной Грузии. Отсюда она продолжалась дальше вверх по р. Агстев и через перевалы Малого Кавказа шла на юг, в Араратскую долину. Эти пути скрещивались в районе Эребуни — Еревана. Отсюда начиналась магистральная дорога, которая вдоль Аракса и дальше через Иранское нагорье вела к древнейшим центрам мировой торговли в нижней Месопотамии — Вавилону, Селевекии на Тигре, и дальше, через Персидский залив, к острову Цейлон и Индии.

В эллинистическую эпоху, в связи с развитием торговли Малой Азии через порты Синоп и Амис, растет значение магистральной дороги, шедшей из этих городов вглубь Армении. Эта дорога через перевалы Армянского хребта смыкалась с путями Араратской долины, где возникли новые центры, из которых наиболее значительным был город Арташат. Значение Эребуни — Еревана пало, но городское поселение продолжало свою жизнь и в дальнейшем.


ՏԱՆԱՅԻ
Նաքսիպոլիս (Նախճավան)
Նաքսիպոլիս
Տանայիս
ԲՈՍՊ (ՔՈՐԵ) ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ
Դիտրուենտ.
Դիոսկուրիան
Դրունք Աղանակ
Կոթող Աղեքսանդրի.
ՍԻՆՈՊ
ԱՄԻՍՈՍ
Սպիտակ
Քարթլի
Լաչաշ (Կաչաչ)
Մեծաւոր
Էրեբունի (Երեվան)
Ավան Մասիս
Նախճավան
Տոռեդա
Թավրեզ
ԳԱՆՁԱԿ
Դիլիջան
ԿՐԱՏԱՆԱ
Սպոլոնիա
Դրունք Զագրոսի.
Բագիստան
Արտեմիտա
ՏԻՌԲՈՆ
ՍԵԼԵՎԿԻԱ
ԲԱԲԵԼՈՆ
Գառնի
ԷՐԵԲՈՒՆԻ (ԵՐԵՎԱՆ)
Հին. 782 մթա
Հին. 776 մթա
ՄՈՏՍԵՍ
Դայլատու լիճ
Ապատ-Մասիս լ.
Մասիս լ.
Տատոնն
Նպատ լ.
Նախճավան
Խարբերդ
Զոլֆա